

ՀԱՅ ՈՒԶԵԼՈՒ ՊԷՍ

*Տարուբերել
(հովահարել)*

Ճամբան բլուրին գազաթեն կ'իջնար:
Հրացան մը կրելու պես քիբը ուսին դրած, ձախ թելը երկայն, երկայն
փարտելով, Թորոս հոն հասաւ որ արելը դէռ լեռներուն ետին էր,
յայտնուելու մօտ, հորիզոնը նարնջագոյններուն մէջն էր
ամբողջովին: Մեղմ հով մը կը փչէր ու շուրջանակի ձորերուն մէջ
խորունկ լռութիւն մը կար:

Թորոս որ բանի մը վրայ չէր խորհեր՝ յանկարծ նշմարեց: Կին մը
կը քալէր բլուրին ստորոտէն, միայնակ, մանր-մանր ու հանդարտիկ,
առանց իրեն նայելու:

Խասն էր: Մարդ չկար:

Թորոսի գլխին մէջ իսկոյն միտք մը փայլեցաւ: Պատեհութիւն
մըն էր, չէ՞ր կարելի արդեօք օգտուիլ... Խասը աղուոր, փայլուն կին
էր: Իրաւ է, իրմէ մեկ-երկու տարի ալ մեծ էր, զաւակներու մայր էր,
նոյն իսկ կարգած աղջիկ ուներ, պարկեշտ էր, բայց ի՞նչ կ'ըլլար,
կարելի էր փորձել, կը յաջողէր թերեւս, երկուքին միջեւ գաղտնի
պիտի մնար, ո՞վ պիտի իմանար:

Ու Թորոս ոտքերը վեր առաւ, շտապեց, ձախ թելը երկայն, եր-
կայն փարտելով:

Բլուրին տակը հասաւ որ Խասը ճամբուն փոշոտ, կարմրորակ
հողով մասը անցեր էր ու անկիւնը կը դառնար: Ալ աւելի շտապեց,
ու ինք ալ անկիւնը դարձաւ:

Հիմա շատ մօտ էր Խասին, գրեթէ առաջքն էր. ինք զառիվարին
առաջին ոլորապտոյտին վրայ էր, ան ալ երկրորդին: Դեղին գծերով
կարմիր էնթարին էր հագեր, փէշերը երկու կողմէն վեր առեր, գօ-
տին կոխեր: Ազդրերուն կորութիւնները կը տարուբերուէին ամէն
քայլափոխին:

Թորոս խոհեմութիւն համարեց չիմացնել թէ ինք ետեւէն կու-
գար: Յանկարծ Խասը կայնեցաւ, գուլպային կապը քակուեր էր,
ծռեցաւ, կապեց: Ինք ալ կանգ առաւ, ու հակած դիրքին մէջ զայն լաւ
մը դիտեց: Իր ցանկութիւնը ալ աւելի գրգռուեցաւ:

Յետոյ Խասը քալեց, ինք ալ հետեւեցաւ: Չառիվարը շատ նեղ ու
ցից էր: Աջ կողմը լեռն էր, իսկ ձախը խորունկ, շատ խորունկ ձոր մը:
Թորոս խորհեցաւ հասնիլ քովը, ու մեկ անգամէն առաջարկել: Բայց

*Բիր՝
մէկ ծայրը հատու
կլոր գաւազան (club):*

*Արեւելեան երկար՝
մինչեւ ոտքերը
հասնող զգեստ*

Եթէ ընդդիմանար, պոռար, ջանձնուէր... հետեւա՞նքը:

Չէ՛, չէ՛. այդպէս չէր ըլլար, կը ձախողէր: Պէտք էր խօսակցութիւնով մը սկսէր: Ըսէր, օրինակ.– «Բարի լոյս, Խաս, առտուն կանուխ ո՞ւր ատանկ մինակդ. մարդդ ալ հետդ չկայ»: Ան պիտի պատասխանէր ի հարկէ: Յետոյ որպիսութիւնը կը հարցնէր, ասկէ-անկէ կը խօսէին, ու ամէնէն վերջը խօսքը կը բանար:

Այսպէս ամէնէն յարմարն էր:

* * *

Յետաձգեց սակայն որոշումը:

Ո՛չ: Սա գառիվարը իջնանք, մտածեց: Պատշաճ չէր գառիվարին վրայ: Չորս կողմը բաց էր. պահուելու տեղ չկար: Խասը դժուար թէ համոզուէր: Ձորը կ'իջնային, հոն լաւ տեղեր շատ կային: Պէտք էր վերջապէս ամէն պարագաներն ալ նկատի առնել:

Ահա Խասը հասաւ ձորը ու սկսաւ քալել աւազներուն վրայէն: Թորոս նոյնպէս հետեւեցաւ, ոտքերը կը թաղուէին աւազներուն մէջ ամէն քայլափոխին: Ձորն ի վար կարգով՝ ակտուր ժայռերէ բարձր պառեխներ կը ցցուէին, իրարմէ անջատ: Յետոյ կաղնիի, գլխի թփաստաններ, նստերը, տերեւները ոչխարի հօտերէն կրճուած, որոնք բոլոր գառիթափերը կը ծածկէին: Ինչքա՞ն ապահով կրնային ըլլալ ասոնց մէջ: Սատանան անգամ չէր տեսներ: Աւելի վարը, սա մեծ ժայռին ետեւը որ խիտ մացառներով շրջապատուած էր...

Մօտենա՞ր արդեօք:

«Այս տարի ալ օդերը ի՞նչպէս չոր կ'երթան: Անձրեւ չեկաւ, կը նայի՞ս, խոտերը չաճեցան. գետինները ըսես քար-երկաթ դարձան»: – «Ով ինչ կ'ուզէ ըսէ, հիւնարով, տնաշէն կնիկ ես, Խաս: Մերինը կրնամ ըսել ոչխարն ալ չէ կրթած հիմա: Դուն տանդ գործը ըրեր ես, ոչխարդ կրթեր ես, կանուխ, կանուխ ալ ճամբայ ելեր ես. կեցցես. որչափ գովեմ քեզ, տեղն է»: Ու խօսքը կը բանար: «Ինձի նայէ, Խաս...»:

Միբտը շուտ-շուտ, շուտ-շուտ սկսաւ զարնել:

Ադրբիւր մը կար, առաջքը երկու բարտիներով, ջուրը փողրակէն կը վազէր գուռը: Ծարաւցաւ: «Ձուր մը խմեմ, ու ալ պիտի հասնիմ, խօսիմ,– խորհեցաւ,– ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ»: Մօտեցաւ, շրթները փողրակին տուաւ, թափած, առատ պէխերը թաթխելով ջուրին մէջ, խմեց: Յետոյ ափովը դէմքը թրջեց, գօտին թուլցած էր, կապեց, ու քալեց հասնելու համար վերջապէս:

Բայց զարմացաւ...: Խասը ոչ միայն ձորին վերելքը բարձրացեր,

Ճիւղ

*Նոճիներու
ընտանիքին
պատկանող
ռետնային
մշտադալար թուփ*

*Կաւէ խողովակ
ջուր փոխադրելու*

այլ շիտակ ճամբուն վերջաւորութեանը հասեր էր: Խասը գացեր էր: Հէյվա խ... ինք այդքան ժամանակ կորսնցուցեր էր արդեօք, թէ ան տեսեր էր զինքը, կասկածեր էր իրմէ, փութացուցած էր քայլերը: Այգիները կ'երեւէին արդէն: Ա՛լ չէր ըլլար...

* * *

Շիտակ իր այգին մտաւ Թորոս:

Բահն ու փետատը խաղողի թուփի մը տակ պահած էր: Գտաւ զանոնք: Առու փորելու եկեր էր այդ օրը. բայց փոխանակ աշխատելու, նստաւ թթենիին տակ: Բոպիկ ոտքերով այգիներու պահապանը եկաւ քովը: Թորոս տրամադրութիւն չունենալով երկար չխօսեցաւ հետը: Ճամբեց ու շարունակեց նստիլ:

Դժգոհ էր:

Ո՛չ: Անճարակ էր ինք, ձեռքէն բան մը չէր գար: Ճամբան որսը առաջքն էր, պատրաստ էր, չկրցաւ օգտուիլ: Չկրցաւ մօտենալ, բերանը բանալ, խօսք մը ըսել: Ինք ալ մա՛րդ էր: Կնիկ ծնելու էր: Չէ, էրիկ մարդ չէր ինք: Թո՛ւ իր էրիկմարդութեանը...

Քիչ մըն ալ նստաւ, յանկարծ ոտքի ելաւ: Ի՛նչ կ'ուզէր թող պատահէր, վճռեց: Խասը այգին էր հիմա: Մինակ: Չպիտի ամչնար: Պիտի երթար քովը, հաց ուզելու պէս պիտի ուզէր:

Գնաց: Խաղողի թուփերուն մէջ Խասը կը ձեռքը խաղող կը կըթէր: Մօտակայ այգիներուն մէջ մարդիկ կային:

Շուարեցաւ:

Ի՞նչպէս ըսէր, երբ այգիներուն մէջ ուրիշներ կային: Կարելի՞ էր:

– Ի՛նչ կ'ուզես, աղբար, հոդ կեցեր ես, բա՞ն մը կ'ուզես, բա՞ն մը պիտի ըսես,– հարցուց Խասը, տեսնելով որ Թորոս կը սպասէ պատին միւս կողմը:

– Չէ, ի՛նչ պիտի ըսեմ,– պատասխանեց Թորոս,– պտտելով աս կողմը եկայ:

Ու անմիջապէս իր այգին դարձաւ, բահին ու փետատին քով, զլուխը գետինը դրաւ ու պառկեցաւ կռնակին վրայ, սրդողելով ինքզինքին ալ, աշխարհին ալ հետ:

*Հող
փորելու
երկայթէ
գործիք:
Hatchet*

*Պտուղ
քաղելու
կողով*

*Պտուղ (կամ
կաթ) քաղել*

- Քանի՞ կերպար

- Քանի՞ խնդիր/հարց

58 - Քանի՞ միջավայր

- Ի՞նչպիսի սիրթ - մե՞ծ թէ փոքր

- Ի՞նչքան նկարագրութիւն - արա՞գ թէ դանդաղ թափ

- Ի՞նչպիսի վերջաւորութիւն - լուծո՞ւմ թէ բացթողում

- Մարդկային ի՞նչ վիճակի դրսեւորում

ՓՇԱՏԻՒՆ ԾԱՂԻԿԸ

Ալիւրոտ
միջուկով քաղցր
պտուղ

առիք՝
առաստաղ
տիկէ խնց՝
Անասունի
մորթի
պարկէ՝
շինուած՝
կաթէն
կարագ
հանելու
գործիք:

առուոյտ
երեքնուկի
(ապրիմ-
մեռնիմ)
խոշոր
տեսակը

Մանուկանց Նարոյին մայրը՝ Թեղուտցին՝ Կեոս հարսիկը՝ ինչպէս կը կանչէին Կեոսյենց տունէն ըլլալուն՝ փողոցին դուռը բացեր էր ու առիքէն կախած տիկէ խնցը կը հարէր: Յանկարծ միտքը ինկաւ: Առուոյտնոցին ջուրը կտրելու էր: Ջուրին հերթը իրենցն էր, առուն մէջը կապեր էին. կէս գիշերէն ի վեր ջուրը մէջը կը վազէր, հիմա ողողած ըլլալու էր ամէն կողմ, թումբերը կը քակէր առուոյտները կը քանդէր: Խնցը ինք չէր կրնար կէս ձգեր երթար, հարելուն ձայնէն յայտնի էր, կարագը թաննէն դեռ զատուած չէր:

– Աղջի, գնա սա առուոյտնոցին կաւառը դարձուր եկուր, մոռցանք, հերիք է որ մէջը վազէ, – ըսաւ Նարոյին:

Նշանուած աղջիկ մը մինակ դրկելն ալ խոհեմութիւն չէր, բայց երթալիք տեղը ուր էր, խորհեցաւ, Բարիկանց ածուքին անկիւնը, առուին դարձած տեղը: Լեղաղբիւրին քովը ըսել էր: Ինտոր ըլլայ քանի մը կնիկ կ'ըլլայ հոն, գուռը երեխայի շոր լուացողներ, կուժով լեղի ջուր տանողներ: Ընելիքն ալ կաւառը պիտի դարձնէ, առուն ձորին պիտի տայ, քանի մը խոշոր քար պիտի շարէ կաւառին առաջքը, որ առուն չփլցնէ ու թեքուի՝ նորէն իրենց կողմը վազէ:

– Չուշանաս, դարձուր ու մի կենար՝ եկուր, – կրկնեց մայրը:

Բահը զարիին անպարին ետեւն էր. Նարոն առաւ դուրս ելաւ: Արագ քայլերով ժամուն վարի պատին տակէն դարձաւ, Քնարենց դռնէն անցաւ, Լեղաղբիւրէն Բարիկանց ածուքին անկիւնը հասաւ, ուրկէ Ակինաձորի առուն պարտէզներու նեղ փողոցը կը մտնէր, ու իրենց առուոյտնոցին ճաղէ դուռը կանգ առաւ:

Բահովը առուին առաջքը բացաւ որ ձորը երթար, կաւառը իրենց կողմը դարձուց, տիղմով աղէկ մը խցեց, ցամքեցուց, յետոյ ալ ծռեցաւ՝ քարերը կարգով շարեց, ամրացուց: Ծամերը կուրծքը ինկան, նորէն կոնակը նետեց, պատրաստուեցաւ որ պիտի շտկուէր, ետեւը մէկը զգաց ու ձեռք մը ծամերուն հիւսքերը բռնեց: Նարոն սարսափահար ետին դարձաւ:

Նշանն էր, նշանածը:

– Վախցա՛ր, – հարցուց Նշան խնդալով:

Նարոն կասկարմիր եղաւ, վախը տակաւ անցնելէն ու ինքզինքին տիրելէն յետոյ յանդիմանական շեշտով մը.

կը հարէր՝
կը գարնէր

կաւառ՝
ջրուղի (դաշտ
ջրելու):

ածուք՝
մաս-մաս
մշակուած հող

գուռ՝
անասուններու
ջուր խմցնելու
փոքր աւազան

– Ինչո՞ւ քովս եկար, կ'ուզե՞ս որ մեկը վրայ գայ, քեզ տեսնեն ու ամենուն բերանը ինկնանք: Մի կենար, գնա՛, – ըսաւ:

Նշան հանդարտեցնելու աշխատեցաւ:

– Մի վախնար, մարդ չտեսաւ, Լեդադբիրն ալ մարդ չկայ, կենալու ըլլար քովդ կուգայի՞, – ըսաւ:– Նայեցայ, որ բահը ուսդ կ'երթաս, ետեւէդ եկայ:

Վայրկեան մը լռեց ու աւելցուց.

– Հայտի, բան մը պիտի չընեմ քեզի, քեզ պիտի չուտեմ, եկուր Բարիկանց ածուքը մտնենք, անոնց մեծ փշատիի ծառին տակը նստինք, թուփերուն մէջ մեզ չեն տեսներ, քիչ մը խօսինք:

Նարօն սաստեց.

– Հա, մեզ չեն տեսներ եղեր, իս մի համոզեր, պէքի ալ ով գիտէ քու հոս գալդ տեսնող ալ եղաւ, – ըսաւ:– Աստուածդ որ կը սիրես, մի կենար, ձգէ որ ես երթամ. հեմ հիմա մարըս ճամբաս կը նայի, ուշանալու որ ըլլամ կը փեքոտէ իս: Գնա՛ քովես:

Նշան գիտէր որ ինք սողայ էր, թող տեսնէին, ի՞նչ պիտի ընէին իրեն, իսկ աղջկան մը համար, պարագան նոյնը չէր: Գիւղին բերանը պիտի ինկնար: Բայց աւելի խորհիլ չուզեց:

– Ի՞նչ կայ, քիչ մը կը նստինք կը խօսինք, կ'ելլես կ'երթաս, – ըսաւ:– Մարդդ չի գիտնար անգամ: Ես կ'ուզե՞մ որ մեր վրայ խօսին, գեղին բերանը ինկնանք: Ու կրկնեց. – Իրաւ կ'ըսեմ, չեմ դպիր քեզի, կ'ուզես երդում ընեմ: Ահա խաչ կը հանեմ, – ըսաւ ու խաչակնքեց:

Նարօն մերժեց: Իր բոլոր սեռակիցներուն պէս գիտէր թէ էրիկ-մարդոց երդումին չէր վստահուեր: Էրիկմարդուն երդումը կ'ըլլար: Եւ թէ փշատիին տակը պիտի նստէին ի՞նչ պիտի ընէին: Ի՞նչ պիտի խօսէին: Պիտի գրկէր, սեղմուկէր զինքը: Ասոնք թէւ մտքէն անցուց, բայց երբ Նշան ստիպեց, թողուց որ պարտեզ տանի զինքը, մասին նստին փշատիին տակը, որ մայիսեան արեւին մէջ մինչեւ գագաթը դեղին ծաղիկներով ծաղկած էր, մեղուները կը թառէին վրան ու կը բարձրանային: Ծաղիկներուն ախորժելի բոյրը կար միջոցին մէջ. աչքերը կը խտղէին քանի անոնց նայէին:

Ու ինչ որ անցաւ մտքէն, նոյնը եղաւ: Նշան թելերուն մէջ առաւ, սեղմեց, համբուրեց աչքերը, ճակատը, ծամերը, բերանը, քանի քանի անգամ, այնչափ որ իր մէջ ալ սեռային մակընթացութիւնը բարձրացաւ, աչքերը փայլեցան, այտերը կարմրեցան, ինք ալ սեղմեց Նշանը, համբոյրներով փոխադարձեց: Մինակ թէ մտքէն չհանեց մէկ պարագան, իր աղջիկնութիւնը, կուսութիւնը: Ոչ: Կը մեռներ, չէր թոյլատրեր: Եւ, ինչպէս գիտէր բնագոյաբար, երբ գրկախառնումներուն սահմանը անցաւ, Նարօ ոտքի ցատկեց, ծամերը իրար անցած:

*(Քաղցրօրէն գրգռել)
Հոս աչքը փայլուն
բանով շլացնել*

– Չէ՛, չէ՛, ես կ'երթամ,– ըսաւ,– երդում չըրի՞ր, ամ է երդումդ:–
Ու Նշանին թեւերէն ազատեց ինքզինքը:

Գիտէր գլխուն գալիքները ու նորէն ինչպէ՞ս տեղի տուաւ, հետեւեցաւ ու փշատիին տակը նստան: Ուշացաւ: Ի՞նչ պատասխան պիտի տար մօրը, հիմա:

Բահր ուսը ինչպէս քալելը չհասկցաւ: Աչքին ծայրովը նայեցաւ: Լեղադբիւր լաթ լուացողներ կային, բայց ծռեր էին գուռերուն վրայ, չնշմարեցին զինքը:

Տուն հասաւ որ փողոցին դուռը նորէն բաց էր: Մայրը շուաքը, ներքնատունը, օճախը ջրցքեր, արլեր էր: Խնոցը առիքէն վար առեր էր, ցօղուեր էր, պատէն կախեր էր որ ցամքեր: Թարմ կարագին գունդը պաղ ջուրով լուացեր էր, կը փայլէր կթոցին մէջ: Խալկինը մինչեւ շրթները թանով պզպզուն օճախին վրայ էր, տակը փայտերը ճարճատելով կը վառէին: Տունը թան ու կարագ կը հոտէր:

Մեծ կաթսայ

Մայրը իրեն նայեցաւ:

– Ի՞նչ կ'ընէիր մինչեւ հիմա, աղջի, ինչո՞ւ ուշացար,– հարցուց:

– Առուին կաւառը դարձուցի:

– Առուին կաւառը դարձուցիր հա՞,– պոռաց:– Աս մէկ կաւառ դարձնելը քանի՞ մը կը տեւէ: Դուն անպատճառ տեղ մը գացիր, բան մը ըրիր, պիտի ըսես:

– Ճամբան Հայնենց Խնկօն տեսայ, կեցայ հետը խօսեցանք, անկէ ուշացայ,– ըսաւ: Կը ստէր: Բերանը ատ եկաւ, ատ ըսաւ, արդարացընելու համար զինքը:

Մայրը չհաւատաց:

– Պիտի երթամ, պիտի հարցնեմ,– ըսաւ:– Նայիմ իրա՞ւ էս: Սուտ ըսած որ ըլլաս, կը տեսնես դուն:

Ու դուրս նետուեցաւ:

Երթալն ու դառնալը մէկ եղաւ:

– Քեզի շուն քեզի, իս ալ կը խաբես,– պոռաց:– Աղջի, Հայնենց դուռը գոց է, մարդ չկայ, անոնք առտուն կանուխ տունով Կարմիր Հողերու եզին գացեր են: Ապուր մը կերեր ես դուն: Դուն տեղ մը գացեր էս: Կը խեղդեմ քեզ շիտակն որ չըսես. ի՞նչ ըրիր, ո՞ւր գացիր, ըսէ:

Ու Նարոյին վրայ վազեց, ծամերէն բռնեց:

Յանկարծ կեցաւ: Ծամերուն մէջ բան մը դպաւ աչքին: Փշատիի պզտիկ դեղին ծաղիկ մը:

– Կեցիր նայիմ, կեցիր: Աս ի՞նչ է, աղջի, աս փշատիին ծաղիկը ծամերուդ մէջ ո՞ւրկէ ինկեր է: Դուն բան մը ըրեր էս, կը պահես ինձմէ: Կը սպաննեմ քեզ, պիտի ըսես: Աղջի, դուն առուն դարձնելու

գացիր, փշատիին ծաղիկը ինտո՞ր կ'իյնայ քու ծամերուդ, դուն ծա-
ռերուն տակ ի նչ գործ ունէիր, չըսէ՞ս:

Ու ծամերէն քաշելով գետին փռեց, երկու ձեռքերուն մատներո-
վը վիզը օղակեց:

– Պիտի խեղդեմ, պիտի մեռցնեմ քեզ, ըսէ, պիտի ըսես,– պոռաց:

Սօրը աչքերը ակնակապիճներէն դուրս ելան: Կեռոյէնց արիւնը
զլուխը խուժեց: Մարսափահար խոստովանեցաւ Նարօն:

– Նշանը քովս եկաւ, Բարիկանց ածուքը գացինք, փշատիին ծա-
ռին տակը նստանք,– ըսաւ:

Մայրը թքաւ երեսը:

– Թո՛ւ... քեզի պէս աղջկանը, լկրտած շուն, արուն ըլլայիր ու
անցնէիր, աշխարհք չգայիր, որձամոլ շուն, աղջի, իմ ցեղիս մէջ,
Կեռոյէնք հինգ տուն են. հօրդ ցեղին մէջ, Մանուկանք չորս տուն են,
քեզի նման որձամոլ մը չէ ելած, դուն ո՞վ ելար: Մէկ մը Վարագայ
Խաչ գար, տայի քեզ կորսուէիր վրայէս: Աղջի, դուն ինտո՞ր հետը
կ'երթաս կը նստիս: Թող նշանածդ ըլլայ, մինչեւ որ չպսակուիս քու
ի նչդ է, քու երի՞կդ է: Դուն ինտո՞ր գացիր չալուներուն մէջ նստար:
Վաղը մահանա մը ընէ քեզ չառնէ ի նչ պիտի ընես: Ծամերուդ մէջ
փշատիին ծաղիկն որ չտեսնէի, իս պիտի խաբէիր, շիտակը պիտի
չըսէիր: Հէմ սուտ ես, ի նչ նստիլ, դուն հետը ապուր մըն ալ կերար:
Հաւատքիս պէս գիտեմ որ դուն աղջիկնութիւնդ ալ վրայ տուիր:
Դուն կնիկ եղար, կնիկ, կնիկ, կնիկ...

Նարօն պաղատեցաւ:

– Հարսիկ, երկու աչքերս քորնան, անդամալուծ ըլլամ, սատկիմ
առջեւդ, ասանկ բաներ մ'անցընէր մտքէդ: Ես ինէ՞նթ եմ, ես կը թո-
ղո՞ւմ ատանկ բան մը, ես կը յանձնուի՞մ:

– Իս մի հաւտացներ,– շարունակեց մայրը,– դուն աղջիկ չմնա-
ցիր, ժամուն պսակդ չեղած, չկարգուած դուն կնիկ եղար, կնիկ,
կնիկ, կնիկ: Հէչ աշխարհքին վրայ լսուա՞ծ, տեսնուա՞ծ բան է որ
աղջիկ մը նշանածին հետը երթայ նստի, ան ալ ծառի մը տակը,
չալուներու մէջ գոց տեղ մը, որ մարդ չտեսնէ: Աղջի, ինտո՞ր աղջիկ
մը տղու մը խօսքին կը հաւտայ: Երիկ մարդուն խօսքին կը հաւտաց-
ուի՞: Երիկմարդ չէ՞, միտքը գէշութեան է, երիկմարդուն սուրբին,
մարգարէին ալ չհաւտացուիր: Ի՞նչ պիտի համոզես, ինձի՞ պիտի
հասկցնես: Քեզ մեծցուցի, տասներուքը տարուան ըրի որ աս սեւ
ձունը գլխուս բերես: Աղջի, հարս եղած գիշերդ, առտուն տոշակդ
վերցնողը աղջիկնութեանդ արունն որ չտեսնէ «աղջիկ չէր» որ
անունդ հանէ, ես ինտո՞ր աս գեղին մէջ պիտի երեւնամ, ինտո՞ր
Մանուկանց չորս տանը մէջ կնիկ պիտի ըլլամ, ներերուս, կեսուրնե-

անկողին

րուս երեսը պիտի նայիմ: Մար չէր, մարմրկի անանկ մարը. կնիկ չէր, կնկտի անանկ կնիկը որ մէկ աղջիկը շահշանցուց, բոնեց մինակը կաւատ դարձնելու դրկեց, աս փորձանքը գլխուն բերաւ պիտի ըսեն ինծի: Ես քեզ ինտո՞ր մինակ դրկեցի: Թող առուն քանդէր առուոյտնոցը, թող խնոցը կէս ձգէի, ես ելլէի երթայի, թող թանը, կարագը փճանար:

Ու հոնգուտ-հոնգուտ լացաւ:

– Հարսի, Աստծոյ եալվար ըլլալու պէս եալվար կ'ըլլամ քեզի. սիրտդ մի հատցներ, աստանկ բան մտքէդ մ'անցըներ, աստանկ բան չեղաւ, ես աղջիկ եմ,– պաղատեցաւ Նարօն:

Փողոցին դուռը ինչպէ՞ս իրարու ետեւէ գարկին: Դուռը պիտի կոտրէին: Էրիկն էր:

Թեղուտցիին աչքերը սեւ ջուր իջաւ: Տունը մթնեց: Էրիկը հասկընալու որ ըլլար իր ոսկորները փշուր-փշուր պիտի ընէր որ աղջիկը մինակը դրկեր էր: Նարօն ներսի մատանը նետեց որ չտեսներ, վազեց ու դուռը բացաւ:

– Ինչո՞ւ դուռը գոցեր էիր, ծօ, ի՞նչ կ'ընէիր որ դուռը ետեւէն ախլեր էիր, չըսէ՞ս ինծի,– պոռաց, շեշտակի իրեն նայելով:

– Նարօն հանուեցուցեր էի, երկու օրէ ի վեր մէջքս կը ցաւի կ'ըսէր, մէջքը շփեցի, անոր համար դուռը ետեւէն ախլեցի որ մարդ վրայ չգար,– պատասխանեց:

Ուրիշ ի՞նչ յարմարցներ:

Էրիկը լռեց:

Փշատիին ոսկեգոյն ծաղիկը գետինը ինկած տեղը մնացեր էր:

ախել՝
փակել

- Քանի՞ կերպար

- Քանի՞ խնդիր/հարց

- Քանի՞ միջավայր

- Ի՞նչպիսի նիւթ - մե՞ծ թէ փոքր

- Ի՞նչքան նկարագրութիւն - արա՞գ թէ դանդաղ թափ

- Ի՞նչպիսի վերջաւորութիւն - լուծո՞ւմ թէ բացթողում

- Մարդկային ի՞նչ վիճակի դրսեւորում